

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՀԱՐՈՆ

ԽԵՇ ՊԻՈԼԵՐԸ



Института
Всесоюзного
Научно-исследовательского
Института
Наук
СССР

ՊԵՏՐՈՎ
ՅԵՐԵՎԱՆ 1931

891.99
Q - 42

2011-05
8 FEB 1931

891.995
Q-42

О. З. О. Р. О. Н.

Ф. И. Л. Ф. К. П. О. Т. Б. Г. Е.

(ФИЛОСОФИЯ)

БИБЛИОТЕКИ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Ф. И. Л. Ф. К. П. О. Т. Б. Г. Е.

1931

З. Б. Р. Б. Ч. А. Ч.

-5 FEB 2013

ՔԱԶ ՊԻՌՆԵՐԸ

Փետրվար տմոի մի ցուրտ տռավոտ եր: Զբունախառն քամին փշում եր մեծ քաղաքի վրա և փողոցների ու կտուրների ձյունը սրբելով՝ շփում այս ու այն կողմ, նըլվում եր հեռազբաթելերի արանքներում, ծխնելույզների մեջ:

Քաղաքը կամաց-կամաց սկսում եր զարթնել: Ավտոներն աղմկում ելին ու սլանում փողոցների միջով: Մարդկի յերկում ելին այս ու այն տեղից, շտապով անցնում ու ծածկում տների մեջ, գործարաններում:

Ցուրտ եր, սաստիկ ցուրտ:

Քամին փշում եր կատաղությամբ և գործարանների բարձր ծխնելույզներից խլում եր ծուխն ու լուծում ողի սառ հոսանքի մեջ:

Քաղաքի հյուիսային ծոլրամասում գտնվող յերկաթուղային բանվարների նորակառուց հանրակացարանում կանքը զարթնել եր արդեն:

Հանրակացարանի յերկրորդ հարկի մի սենյակում ապրում եր սլաքավար իվան Մարտիրոսյանն իր յերկու յերեխաների ու կնոջ հետ: Այդ առավոտնա գնացել եր արդեն աշխատանքի: Տաքուկ սենյակում, իր անկողնի մեջ դեռ քնած եր իվանի մեծ վորդին՝ պիոներ Վարդգեսը: Նրա փոքր քույրը՝ վոմկեմազ կիզան զարթնել եր արդեն և նստած անկողնի մեջ, իր ձեռքով կարած շու երն եր հագցնում հորաքը ջից նվեր սաացած տիկնիկին և գունավոր,



60710-67

պատկերազարդ մի դիրք զբած վերմակի վրա, մեղմիկ ու զվարժ պատմում եր նրան նկարների մասին և կարգում մեծ տառերով տպված փոքրիկ պատմվածքը: Իսկ մայրը նոր դոփնոցը կապած, թիթեղե վառարանի վրա նախաճաշի պատրաստություն եր տեսնում:

Ժամի 9-ին մոտ եր արգեն:

Գազազած քամին մոլեղնում եր, սուլում փողոցների մեջ, քսվում եր պատերին և ծհծում փակ պատուհանների լեղիածածածկ տպակիները:

Յեզ մայրը մտածում եր.

— Այսոր Վազգեսս դպրոցից թող մի քիչ ուշանա, չեմ արթնացնի, այս սարսափելի ցրտին կարող ե մըրսել և հիվանդանալ:

Քնած Վարդգեսը շուռ լեկավ իր անկողնում: Մայրը կարծեց արթնանում ե, բայց նա զեռ քնած եր անուշ լեռազներով:

Իբր թե դպրոցումն ե: Փետրվարյան հեղափոխության ամբեղարձի առթիվ աշխորհուրդը ցերեկույթ և կազմակերպում: Գառնիկը ցուցակագրում է սրան ու նրան, գործասնակցեն հանդեսին: Ինքն ել ցուցակագրվեց վասանանավոր արտասահմելու համար: Ահա տոնի որն արգեն... Դպրոցի դահլիճը լիքն է ծալըից ծայր, ինքը բեմի վրայից արտասահմում է անզիք սովորած վասանավորը... վերջացրեց: Բոլորը ծափ են տալիս, ժպտում են, ուրախ են: Դպրոցի վարիչ ընկ. Հուկասյանը ծիծաղկոս աչքերով նույն է իր ակնոցների տակից և ծափ է տալիս... քառաձայն խումբը լերգում ե...

Քամին դրսից ծեծում եր պատուհանների տպակիներն ու սուլում պատերի տակ:

Վարդգեսը նորից դարձավ անկողնի մեջ, աչքերը բա-

ցեց, նայեց իր շուրջը և վեր թռավ պառկած տեղից ու նստեց անկողնում:

— Մամա, դպրոցից խոմ չեմ ուշացել, ժամի քանի սըն ե, — հարցըց նա աչքերը տրորելով:

— Զե, սիրելիս, գեռ չես ուշացել, բայց վեր կաց, արդեն ժամանակն ե:

Վարդգեսն սկսեց հաղնվել և նայեց պատի ժամացուցին:

— Վայ, մամա, ասում ես չեմ ուշացել, բա սա ինչ ե, արգեն իննից հինգ ըսպե լե պակաս:

— Լավ, լավ, հագնվիր, կաթը պատրաստ ե, կիսմես և կդնաս:

Վարդգեսը շրթունքները կախեց, դժգոհության մի քանի խոսքեր ստաց, արագ հագնվեց և վազեց լվացվելու:

2.

Քիչ անց պլոտներ Վարդգեսը գրքերի պայուսակը մեջ քին վագում եր փողոցով, վոր շուտ հասնի գպրոց:

Քամին ձյան մանրիկ հատիկները շփում եր նրա գեմքին, վերաբերելի փեշերը քաշըում եր, ֆոռացնում և աշխատում եր զլխարկը թոցնել զլխից: Նա հազիվ 13 տարեկան կլիներ. Նինար եր մի քիչ, բայց աշխույժ եր ու ճարպիկ: Նրանց դպրոցը գտնվում եր լերկաթուղու մյուս կողմը և սովորաբար, լերբ ուշացած եր լինում, կամ ժամանակը քիչ մնացած, նա, վիտանակի փողոցներով գնալու, ուղղակի կտրում եր բաց տարածություններ, անցնում եր յերկաթուղուց այն կողմը և վազվելով հասնում դպրոց:

Այսոր ել նա այդ ճանապարհով գնաց, սառած ձյան վրայից շապառվ վազեց առանց խրվելու: Յերբ վազելուց սառն ողը չնշելով հոգնում եր, սկսում եր արագարագ քայլել և սրանեղությունից չգիտեր ինչ անել: Այդ որն

առաջին դասը թվաբանություն եր. ուսուցչունու տված
4 խնդիրներն ել յերեկոյան լուծեց, մտածեց վոր վաղը
բոլորից առաջ ինքը կմոտենա զբանախտակին և կլուծի
տված 4 խնդիրներից վորն ել վոր առաջարկելու լինի ու-
սուցչունին և այդ ուշախ տրամադրությամբ ել քնեց. իսկ
այսոր ուշացել ե այդ դասից. Յերեկի ընկերներն ել կլար-
ծեն, վոր Վարդգեսը չի կարողացել լուծել տված խնդիր-
ները և դրա համար ել դիտմամբ ուշացել ե առաջին դա-
սից:

Այսպես մտածում եր նա և հասել եր արդեն յերկա-
թուղուն: Արագարագ բարձրացավ թմբի վրա և ուզում
եր անցնել, յերբ հանկարծ վոտքը սալթաքեց և ընկավ
յերկաթյա գծերի մեջտեղը: Ծնկները սաստիկ ցավեցին,
ճակատը դիպակ դիմացի ոելոին և մեկեն ուռավ ընկույ-
զի մեծությամբ... սաստիկ ցավը մի կողմից, դպրոցից ու-
շանալը մյուս կողմից, ապա դաժան սառնամանիքն ու քա-
մին... այս բոլորն այնքան ելին նեղել, վոր նա չկարողա-
ցավ դիմանալ, մկնեց լաց լինել ու թափ տալ վրավի ձյունը:

Հանկարծ, կարծես մեկը խփեց նրա մեջքին այնքան
ամուր, վոր ձայնը մեկեն կարվեց... արցունքուա աշքերը
սարսափով չուած նայեց առջի ճաքած ոելոին... աշքերն
արագարագ թարթեց ավելի լավ տեսնելու համար և սա-
կայն տեսածն իրականություն եր. դիմացի ոելով սաստիկ
սառնամանիքից ճաքել եր ու բացվել մոտ մեկ գեցինեար
տարածություն:

Վարդգեսը սոսկաց, գունատված նայեց իր շուրջը
մարդ չկար, վոչ վոք չեր յերեսում, միայն ձյունախտան
քամին եր հսնում, զարկվում եր հեռվի այս ու ոյն տան
պատերին, վայում եր չարագուշակ և արշավում դաշտե-
րի միջով:

Հեռվից, ձևան փոթորկի միջից մարդատար գնացքն

ահավոր դղրդոցով գալիս եր, վոր գնար քաղաքի կայարան:
Պիոներ Վարդգեսը սարսափեց... Պետք եր գնացքը
փրկել: Նրա գլխում դարձան մեկը մյուսից արյունոտ, զար-
հուրելի պատկերներ... ահա այդ գնացքը ճաքած ոելոից
դուրս կթուշի, վագոնները կարկվեն իւար, կվշվեն...
հարյուրավոր մարդիկ կմեռնեն, կփրավորվեն, կթափվեն
ձների մեջ արյունալվա... ջարդված վոսկորներնիվ... փոք-
րիկ յերեխաններ ել կինեն... իր քույր Լիզիկի նման աղ-
ջիկներ... կմեռնեն անպայման, կվիրավորվեն կամ կֆան
առանց ծնողների, կգառնան վորք, վորք և սարսափելի յե,
սորսափելի... մամա, մամա ջնն...

Պիոներ Վարդգեսն սկսեց ավելի սաստիկ լաց լինել, ճչալ
վոանները խփել գետնին: Նորից նայեց իր շուրջն արցուն-
քուա աշքերով. մարդ չկար... քամին եր սուլում և ձյու-
նը շփում նրա յերեսին, աշխատում եր պոկել իր տեղից
և կարծես մեկն ասում եր ներսից.

— Հիմար տղա, փախիր այդ տեղից, շնւա, հիմա կը-
մեռնես... այդ փոքրիկ մարմինդ կճիւվի յերկաթե գնաց-
քի տակ:

Մարդատար, ճեպընթաց գնացքը սուլում եր արագ-
արագ. Սեվ ծուխը տալիս եր բամուն և սողում եր առաջ,
մեծանում եր հետզիետե, աղմձկում եր ու մոտենում: Իսկ
պիոներ Վարդգեսը զլիսարկը հանած շարժում եր բարձը
ու բնազդով գոռում կանգնած յերկու գծերի մեջաեղը: Երա
շուրջը փոթորկոտ քամին եր սուլում հեռագրաթելերի մեջ,
զետնից ավում եր ձյունը և շփում պիոների վրա:

Մեքենավար Լեռնը նստել եր շողեմեքենայի մեջ, մի
կեղասոտ արկղի վրա, կրծում եր խողի յուղը, ծամուճ եր
ու հացով և վրան խմում եմալե մեծ բաժակով քաղցր
թեյը: Ոգնականը ուրախ ուրախ կատակում եր նրա հետ
և ղեկավարում գնացքը:

— Սարգիս, — դարձավ մեքենավարն ոգնականին, — ախր մաղալու մարդ ես զու, յեթե այդքան հավեսով և ուրախությամբ ես պատմում ձեր գյուղի մասին, մի՞նե հիմա չես փոշմանել, վոր յեկել ես քաղաք և դառել բանվոր:

Ոգնականը նայում եր ճանապարհը դիտող փակ պատուհանից դուրս, տե՛ նում եր գաշտերի փոթորկող ձյունը, հրճվում եր նրա վայրենի պարով և ուրախ շնչում մեքենայի յուղոտ, քարածուխոտ, նավթոտ ողը: Նա ուզեց պատասխանել մեքենավարին, բայց հանկարծ տարրինակ մի ձայն հանեց, դեմքով կազավ պատուհանի ապակուն և լարված ուշագրությամբ նայեց առաջ:

— Ասոն... մի մարդ ե կանգնել զծերի մեջտեղը և ձեռներն և շարժում... գեկուցեց ոգնականը և արտգ շշակի կոթը քաշեց:

Ասոնը վեր թռալ տեղից, դիպավ փորբիկ սեղանի վրա դրված թեյի բաժակին և վար գցեց: Զուրը մնդիկի դնդիկների նման ցլվեց ամեն կողմ յուղոտ հատակի վրա և թափվեց դուրս.

— Ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել — կամնչեց մեքենավարը, կարծես չսեղով ոգնականի ասածը և թռավ պատուհանի մաս ու նայեց առաջ... Թաշտերում և հեռվի կտուրների վը բայից քամին սրբում եր ձյունը և փոթորկում ողի մեջ... չեռվում մի փոքրիկ մարդ կանգնել եր սելսերի մեջ ահղը և ձեռքով շարժում եր ինչ վոր մի սե բան:

— Սարգիս, չի փախչում, զուցե վտանդ կա...: սուլիքը, սուլիքը... յես արգելակները կսեղմեն անիմսերին, զուցե կանգնեցնենք գնացքը: Նա շատապով բացեց հնոցի դուռը և անցավ գործի:

Ոգնականի դեմքի վրայից սառ քըտինքի կաթիւներ

հին դլորվում: Նա սաստիկ վախեցած նայում եր պատուհանից գծերի մեջ կանգնած, արագ մոտեցող մարդուն և քաշում եր շշակի կոթը և սուլում...

Հնոցի մեջ կրակը մոնչում եր և կարմիր, կապույտ բայերով լափում դեռ չայրված քարածուխի կտորները:

Մեքենավարը շտապ-շտապ փակում եր մեքենայի ինչ վոր մատեր, գոլորի յեր բաց թողնում, արգելակները սեղմում անիմսերի վրա և ամեն միջոց գործադրում գընացքը կանգնեցնելու համար:

Ոգնականը ձգել եր շշակի կոթը ու սւլում եր, սուլում: Վագոնների մեջ սաստիկ անհանգտություն եր ընկել: Բոլորն ել վախով բռնված շտապում եին դռների մոտ փակ պատուհաններն եյին բաց անում, ահավոր աշքերով նայում առաջ, բայց վրչինչ չեցին կարողանում տեսնել և անհանգիստ ու լարված զղերով հարցնում եյին, թե ինչու յեն այնքան սուլում, այսպես յերկար, կցկտուր չարագուշակ... չե վոր կայտարնը դեռ հեռու յե...

Քամին քրքջում եր, սուլում հեռազբաթելերի արանքներում, վագոնների անիմսերի մոտ ու գետնից ձյուն հավաքելով շփում եր պատուհաններից ու դռներից նայող ճամբորդների յերեսնելին:

Գիացքի արագությունն սկսել եր զանդաղել ավելի ու ավելի:

4

Պիոներ վազգենը դեռ կանգնել եր իր տեղում, յերկու ձեռքերը զլիսից վեր բարձրացրած, աջակ շարժում եր զլիսարկը և աղաղակում: Քամին ֆոփոացնում եր վերակուլի փեշերը, փափուկ մազերն իր սր եր տալիս և ձան հատիկները շփում դեմքին, ձգված ու բարսկ, վզին, ականջների մեջ ուղղակի:

Գնացքը մոտենում եր հեվալով, շնչառապառ և հետըդհեակ ձեծանալով, աղմկում եր, գոլորշի փշում յերկու կողմերից:

Վոչինչ չեր մտածում այդ քաջ սլիոները, վոչինչ չեր զգում, վոչինչ չեր կարողանում հիշել դիտեր միայն, վոր պետք եւ կանդնել այդ տեղ՝ մահվան այդ յերկու սև գըծերի մեջ, վորպեսզի կանդնեցնի այդ ֆշացող, հեացող յերկաթե հսկա գազանին, վոր հարլուրավոր մարդիկ չմեռնեն:

Մոտեցող, մեծացող գնացքի շունչն արդեն զգում եր վանքան ու դողում ամրող մարմնով: Իսկ գնացքը դալիս եր, գոլորշի յեր փշում կողքերից և սուլում եր, սուլում եր...

Տասլերեք տարեկան տղայի սիրտը չկարողացավ տանել այնքան հանկարծահաս սարսափը. Արան թվաց, վոր գնացքը թռավ, հասավ իրեն...նա ճշաց ու որորվեց կանգնած տեղում...

— Մամա...

Աչքերը մշուշվեցին, թվաց թե յերկաթե հսկան դարկեց իրեն... տրորեց իր տակը ու անցավ... նա անզգավովեց գետնին, ձների մեջ:

Քամին վաղում եր, սուլում և շիում եր ձյունը սլին երի վրա:

Գնացքը կանգ տռավ սիոներ վարդուից միայն հինգ քայլ հեռավորության վրա:

Մարդիկ վագոններից թափվեցին դուրս և վաղեցին սուաշ:

Մերենավարն արագ վար իջավ շոգենեքենալից, վաղեց գնացքի առաջ և գրկեց, բարձրացրեց ուշաթափ սլներին ու սոսկաց, յերբ նկատեց ձաքած ուելոր կրծքին սեղմեց իրանց այդ փոքրիկ ազատութարին, ջերմ-ջերմ համ-

բուրեց նրա գունատ ճակատը և գրկած վազեց դեպի գընացքի սանիտարական բաժանմունքը:

Ճանապարհորդներն ուրախ ու հուզված վազում ելին մեքենավարի յետելից և ուզում ելին տեմել այն հերսո տղային, վոր կարողացել եր գնացքը փրկել անխուսափելի խորտակումից:

Զյունախառն քամին մռնչում եր, սուլում, ծեծում եր վագոնների կողերը և աղմուկով գալարվում, անցնում վագոնների տակից, փշում եր գեանի ձյունը և վազում հեռու, հեռու...


Քիչ հետո գիծը նորոգեցին և գնացքը նորից սուլեց, քաշեց վագոնների շարքը և ուրախ աղմուկով շտապեց կայարան:

1929 թ.
Յերևան



ՀՊՀԱՐԱՐ

Հայութ պատմութիւն օրենքա բառեց և
 հայութ արքա ամառու առաջ աղութ առաջ աղութ աղութ
 աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ
 աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ
 աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ
 աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ աղութ




NL0399022

6339

ԳՐԱԾԱՀԱՅԻ ԿՈԴ.

ԱՐ
ՏԱՐ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОНОВІДЕНИЯ
Академии Наук
ССР

АГАРОН
ХРАБРЫЙ ПИОНЕР
ГИЗ. ССРА ЭРИВАНЬ